Արձանագրություն N 2

ՀԾԿՀ-18/1-ԳՀԾՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Սարյան 22

28 նոյեմբերի 2017 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Արթուր Բեգլարյանը, Մեսրոպ Ղարիբյանը, Սմբատ Աղաբաբյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և կասեցման մասին

ՀԾԿՀ-18/1-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը			
	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ ՀՀ, ք. Ռուբինյանց փ.31	«Մ-Բի-Ռ» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4	«Տուրբոլայն» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Շիրազի 39/1	Նախահաշվային գին
	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ չվճարող	
	Գնային առաջարկը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/			
1	-	1669283	1412500	
2	1730583.33	1125600	1392000	
3	1762250	1125600	1455000	
4	1798750	1125600	1550000	

Հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված հայտերը և արձանագրեց, որ «Մ-Բի-Ռ» և «Տուրբոլայն» ՍՊԸ-ների ներկայացրած հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին, իսկ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում «Հավելված 2.1»-ի փոխարեն «Հավելված 3»-ը կրկնակի է մուտք արվել armeps.am համակարգ, ինչպես նաև «Հավելված 4.1»-ը ներկայացված է թերություններով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին առաջարկելով 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան անհամապատասխանությունների շտկման ժամկետին հաջորդող օրը ժամը 10:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Լիլիթ Մկրտչյան
անդամներ	_____	Ջուլիետա Բաբայան
	_____	Արթուր Բեգլարյան
	_____	Մեսրոպ Ղարիբյան
	_____	Սմբատ Աղաբաբյան
քարտուղար	_____	Էդգար Շադյան